



SGP The GEF
Small Grants
Programme



Երևան - 2021



ՁԿՆՈՐՍԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Սիրելի՛ ձկնորս,
Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը հրաման է արձակում, որում սահմանվում են սիրողական ձկնորսության համար տվյալ տարում նախատեսվող յուրաքանչյուր ձկնատեսակի որսի թույլատրելի չափաքանակները և ժամկետները, ինչպես նաև որսի ենթակա ձկնատեսակի մարմնի նվազագույն երկարությունը:

Հիշեք. արգելվում է ձկների որսը նրանց ձվադրման ժամանակահատվածում:

Սիրողական ձկնորսության համար նախատեսված ձկնատեսակների անվանումների ցանկը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի գետերում, լճերում և ջրամբարներում այդ ձկնատեսակների քանակի փոփոխություններից: Մասնավորապես, 2021 թվականի համար սահմանվել են սույն հիշատակարանի 2-րդից մինչև 6-րդ էջում նշված ձկնատեսակները և դրանց որսի չափաքանակները:

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՁԿՆՈՐՍԻԻԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՁԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ

ԿԱՐՄՐԱԽԱՅՏ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 1 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ հոկտեմբեր-նոյեմբեր, թույլատրելի չափերը՝ 15 սմ և ավելի:

ԾԻԱԾԱՆԱԽԱՅՏ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը՝ առանց սահմանափակման, ձվադրման ժամանակահատվածը՝ հունվար-մարտ:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԹԵՓՈՒՂ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 3 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ ապրիլ-հունիս, թույլատրելի չափերը՝ 20 սմ և ավելի:

ՄՊԻՏԱԿ ԱՄՈՒՐ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, թույլատրելի չափերը՝ 70 սմ և ավելի:

ԿՈՒՐԻ ԿՈՂԱԿ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 25 սմ և ավելի:

ԿՈՒՐԻ ԲԵՂԱԶՈՒԿ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 4 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հուլիս, թույլատրելի չափերը՝ 20 սմ և ավելի:

ՃԱՆԱՐ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 30 սմ և ավելի:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՌԵՏԻԿ




Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 3 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 8 սմ և ավելի:

ԾԱԾԱՆ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 40 սմ և ավելի:

ՍՊԻՏԱԿ ՀԱՍՏԱՃԱԿԱՏ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, թույլատրելի չափերը՝ 50 սմ և ավելի:

ԽԱՅՏԱԲՂԵՏ ՀԱՍՏԱՃԱԿԱՏ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 5 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 50 սմ և ավելի:

ԱՐԾԱԹԱՓԱՅԼ ԿԱՐԱՍ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 10 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ ապրիլ-հունիս, թույլատրելի չափերը՝ 10 սմ և ավելի:

ԲՐԱՄ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 2 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ ապրիլ-մայիս, թույլատրելի չափերը՝ 20 սմ և ավելի:

ԼՈՔՈ



Տվյալ տարվա փետրվարի 1-ից դեկտեմբերի 30-ը, 8 կգ-ից ոչ ավելի յուրաքանչյուր որս/օրվա ընթացքում, ձվադրման ժամանակահատվածը՝ մայիս-հունիս, թույլատրելի չափերը՝ 60 սմ և ավելի:

ՀԻՇԵՔ

Հայաստանի Հանրապետությունում սիրողական ձկնորսության օբյեկտ են այն ձկնատեսակները, որոնք ընդգրկված են ձկնորսության օբյեկտ հանդիսացող կենդանիների ցանկում և ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գրքում:

Կարևոր է իմանալ.

Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գրքում ընդգրկված հետևյալ ձկնատեսակների որսը արգելված է:

ՀՀ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ՎՐՔՈՒՄ ԸՆԴՎՐԿՎԱԾ ԶԿԵՆՏԵՍԱԿՆԵՐԸ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ



Սևանի իշխանի անհետացող, տեղային տարածվածություն ունեցող էնդեմիկ ենթատեսակ է և քնության մեջ հանդիպում է Սևանա լճում:

ԱՄԱՌԱՅԻՆ ԻՇԽԱՆ



Սևանի իշխանի անհետացող, տեղային տարածվածություն ունեցող էնդեմիկ ենթատեսակ է և քնության մեջ հանդիպում է Սևանա լճում:

ՁՄԵՌԱՅԻՆ ԻՇԽԱՆ



Սևանի իշխանի անհետացած ենթատեսակ է: Նախկինում տարածված է եղել Սևանա լճում, որտեղ այլևս չի հանդիպում լճի մակարդակի իջեցման հետևանքով բազմացման վայրերի կորստի և գերորսի պատճառով:

ԲՈՋԱԿ



Սևանի իշխանի անհետացած ենթատեսակ է: Նախկինում տարածված է եղել Սևանա լճում, որտեղ այլևս չի հանդիպում լճի մակարդակի իջեցման հետևանքով բազմացման վայրերի կորստի և գերորսի պատճառով:

ՍԵՎԱՆԻ ԿՈՂԱԿ



Սևանա լճում տարածված ծածանագգի ձկնատեսակ է, որի պաշարները զգալիորեն նվազել են վերջին տասնամյակների ընթացքում և պահպանության կարիք ունեն:

ՍԵՎԱՆԻ ԲԵՂԱՁՈՒԿ



Սևանա լճում և նրա մեջ թափվող առանձին գետերում տարածված ծածանագգի ձկնատեսակ է, որի գլխաքանակը զգալիորեն նվազել է վերջին տասնամյակների ընթացքում և պահպանության կարիք ունի:

ՀԱՇԱՄ



Հայաստանում տարածված է Արաքս գետի ավազանում, որտեղ նրա գլխաքանակը նվազման միտում ունի:

ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՐՄՐԱԿՆ



Տարածված է Մեծամոր գետում և դրա հետ կապված ջրանցքների և լճերի համակարգում: Սահմանափակ տարածվածության պատճառով այս ձկնատեսակը խոցելի է արտաքին պայմանների կտրուկ փոփոխությունների դեպքում:

ԿՈՒՐԻ ՔԱՌԹԱԿ



Հայաստանում տարածված է Արաքս գետի ավազանում և հանդիպում է շատ հազվադեպ:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ԾԱԿԱՆ



Հայաստանում տարածված է Արաքս ու Կուր գետերի ավազանին պատկանող գետերում և հանդիպում է հազվադեպ:

ՍԻՐՈՂԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ.

1. Սիրողական ձկնորսություն իրականացնելու համար անհրաժեշտ է պայմանագրի կնքել սիրողական ձկնորսությանը զբաղվողի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության միջև:
2. Համաձայն «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի՝ սիրողական ձկնորսության օբյեկտների որսը վճարովի է:
3. Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի՝ սիրողական ձկնորսության նպատակով տվյալ ձկնատեսակի յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար սահմանված են բնօգտագործման վճարներ, որոնք մինչև 2020 թվականը փոփոխվել են՝ սահմանված դրույքաչափը բազմապատկելով որոշակի գործակցով:

Ձկների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար	Դրույքաչափը (դրամ)
Սիգ	50
Լոքո	400
Սպիտակ ամուր, հաստաճակատ	500
Կարմրախայտ	1000
Կարաս	20
Ծածան	100
Ցանկում չնշված այլ ձկնատեսակներ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների)	30

ՍԻՐՈՂԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱԳՆԵԼՈՒ ԴԱՄԱՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ (ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2019 թվականի փետրվարի 12-ի N33-Ն հրամանի)

1. Սիրողական ձկնորսությամբ զբաղվելու համար իրավաբանական և ֆիզիկական անձինք ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացնում պայմանագրի կնքման մասին հայտ՝ նշելով իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, օգտագործման ենթակա տարածքը (մարզը), որսամիջոցները, օգտագործման ժամանակահատվածը, ձկնատեսակի անվանումը (տեսակը) և դրա քանակությունը:
2. Հայտերն ընդունվում են առձեռն, էլեկտրոնային փոստով կամ սիրողական ձկնորսության և որսի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով:
3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում, բացառությամբ սիրողական ձկնորսության և որսի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված հայտերի, հայտատուի հետ կնքում է պայմանագրի կամ մերժում է հայտը:
4. Հայտի մերժման հիմք են հանդիսանում հայտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված միջոցներ կամ ձևեր, կամ գործիքներ, կամ մեթոդներ նշելը, ինչպես նաև՝ ա) դիմողի կողմից հայտում և դրան կից ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տվյալների առկայությունը,
 - բ) հայտում ներկայացված վայրի կենդանու տեսակի վիճակի որակական և քանակական տվյալների վերաբերյալ ոչ բարենպաստ ցուցանիշները, իսկ որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների համար նաև տվյալների բացակայությունը,
 - գ) հայտում ներկայացված վայրի կենդանու տեսակը Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված լինելը:
5. Պայմանագրի կնքման մասին հայտի մերժումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:



ՍԻՐՈՂԱԿԱՆ ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱԳՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի «Որսի կանոնները հաստատելու մասին» N9-Ն հրամանի)

Սիրողական ձկնորսությամբ զբաղվելու դեպքում ձկնորսը՝

1) միաժամանակ կարող է ունենալ երկու որսամիջոց (կարթ)՝ յուրաքանչյուրը ոչ ավելի, քան երկու կեռիկով (երկու և երեք ելունով կեռիկները համարվում են մեկ կեռիկ),

2) խեցգետնի որսը կարող է իրականացնել առավելագույնը երեք խեցգետնորսիչով՝ մինչև 70 սմ տրամագծով և 22 միլիմետրից ոչ պակաս ճեղքերով,

3) ստորջրյա որսը պետք է իրականացնի մասնագիտական զենքով (լարվող միայն ձեռքի ուժով)՝ հարպունի լայնությունը ոչ ավելի, քան 10 սմ,

4) ստորջրյա որսի ժամանակ պետք է իրեն ամրացնի հատուկ լողակ (բույ):

Մնացած որսամիջոցների օգտագործումն արգելվում է:

Սիրողական ձկնորսությամբ զբաղվել ցանկացողները պետք է ծանոթ լինեն հետևյալ իրավական ակտերին.

1. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք,
2. «Որսի և որսորդական տնտեսության մասին» ՀՀ օրենք,
3. ՀՀ Հարկային օրենսգրքի 208 հոդված,
4. ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի «Կենդանական աշխարհի օբյեկտների՝ սոցիալական նպատակներով օգտագործման մասին պայմանագրերի կնքման կարգը հաստատելու մասին» N884-Ն որոշում,
5. Բնապահպանության նախարարի 2019 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման մասին (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) հայտի և պայմանագրի ձևերը հաստատելու մասին» N33-Ն հրաման,
6. Բնապահպանության նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի «Որսի կանոնները հաստատելու մասին» N9-Ն հրաման: